



**«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՉԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ**



**ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍԱԿՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ 2022**

ՀԵՏԱՉՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	« Կրակային պատրաստության հիմնախնդիրները ՀՀ Չու-ում»
ԱՌԱՐԿԱ	Նախնական զինվորական պատրաստություն
ՀԵՂԻՆԱԿ	Լևոն Պետրոսյան
ՄԱՐԶ	Կոտայքի մարզ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Մարմարիկի միջնակարգ դպրոց

Բովանդակություն

1. Ներածություն.....	3
2. Գլուխ I: Հետազոտական համատեքստ, Գործնական համատեքստ.....	4
3. Գլուխ II: Կրակային պատրաստության անվտանգության կանոններ.....	7
4. Գլուխ III: Հետազոտական ընթացք.....	9
5. Եզրակացություն.....	18
6. Գրականության ցանկ.....	19

ՆԵՐԱՆՈՒԹՅՈՒՆ

Ռազմական գործը և զինվորական պատրաստությունը մարդկության պատմության ձևավորման հետ միասին սկսել է գոյություն ունենալ, իսկ «Նախնական զինվորական պատրաստություն»-ը, որպես առարկա մեր իրականության մեջ կյանքի է կոչվել 20-րդ դարի սկզբներին: «Նախնական զինվորական պատրաստություն» առարկան հնարավորություն է տալիս ձևավորելու մտածող, քաջ և հայրենիքի պաշտպանությանը պատրաստ քաղաքացի:

Հանրակրթական դպրոցում «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ուսումնական ծրագիրը կառուցվում է հիմնարար գաղափարների հենքի վրա պարուրածն սկզբունքով՝ հիմնական դպրոցում սատացած գիտելիքները ընդլայնվում և խորացվում է ավագ դպրոցում: Հիմնարար գաղափարների շուրջ «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ծրագրի կառուցումը հնարավորություն է ընձեռում արդյունավետ ապահովելու ներառարկայական և միջառարկայական կապերը՝ նպաստելով զինվորական պատրաստության, առաջին օգնության և անվտանգ կենսագործունեության հիմունքերի վերաբերյալ համակարգային պատկերացումների ձևավորմանը:

Ըստ հանրակրթական հիմնական և ավագ դպրոցների «ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ» առարկայի չափորոշչի հայեցակարգի, դպրոցում ՆՁՊ առարկայի դասավանդումը պատանիներին հնարավորություն է տալիս անհրաժեշտ ռազմական գիտելիքներ ստանալ և ծառայության զորակոչվելիս, հեշտությամբ յուրացնել Նորակոչիկների պատրաստության ծրագիրն ու դրանք լավագույնս կիրառել զինվորական ծառայության ժամանակ: Առարկայի դասավանդումը ճիշտ և տեղին է իրագործել պարզից բարդին անցնելով՝ սկզբում ըստ տարրերի վարժածների կատարումով, այնուհետև՝ դրանց ամբողջական կատարմամբ:

ՆՁՊ գիտելիքների կիրառական փորձառության ձեռքբերումը անհրաժեշտ է իրականացնել գործնական պարապմունքների ժամանակ հրաձգարաններում և

գորամասերում, օգտագործել դասավանդման մեթոդական բազմազանությունն ուսումնական զենքի, սարքերի, պաստառների առավելագույն օգտագործմամբ:

Կարևորվում է նաև միջառարկայական կապերի օգտագործումը: Դասերը հաճախ կազմակերպվում ինտերակտիվ (փոխներգործական) մեթոդներով, երբ սովորողը հնարավորություն ունի արտահայտել իր խոսքն ու կարծիքը, ստեղծագործել, դրսևորել իր գիտելիքներն ու ունակությունները երկխոսության, տարբեր վարժությունների միջոցով:

Գլուխ I: **ՅԵՏԱՉՈՏԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍ**

Նախնական զինվորական պատրաստությունն առարկայի կրակային պատրաստության ժամանակ անհրաժեշտ է ինքնաձիգի հետ հնարավորինս լավ ծանոթանալը, սակայն գործնական դասերի ժամերը քիչ են, ուստի դրանք բավարար չեն ավելի հմտանալու զենքի ուսումնասիրության, նշանառության մեջ գերազանց արդյունքներին հասնելուն:

Սովորողներին ներկայացվող պահանջներից են ծրագրերին ու չափորոշիչներին համապատասխանող գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձեռքբերումը: Դրան հնարավորինս հասնելու համար, ուսումնական ծրագրերից զատ, անհրաժեշտ է օգտագործել նաև արտադասարանական միջոցառումների հնարավորությունները: Առավել ակտիվ, կարող, իր անձի շուրջ մյուս աշակերտներին հավաքող ու հրամանատարական ձիրք ունեցող սովորողներին պետք է նշանակել որպես օգնող, սովորեցնող, միևնույն ժամանակ՝ նրանց դրդելով եղածից ավելիին հասնելուն:

Յետագոտության համատեքստում նաև հաշվի առնելով ապրիլյան 4-օրյա և 2020 թ-ի 44-օրյա պատերազմները ակնհայտ է, որ հիմա արդի զենքերի կիրառման ժամանակաշրջան է, և բացի ՀՀ զինված ուժերում մշտապես օգտագործվող ԱԿ-74 ինքնաձիգը, Դրագունովի դիպուկահար հրացանը, ձեռքի պաշտպանական ու հարձակվողական նռնակները, հակատանկային նռնականետները և հրետանին այժմյան պատերազմներում կան նոր, արդի գերժամանակակից զենքեր ու զինատեսակներ, որոնց գործունեությունը, աշխատանքն ու նպատակային գործածությանն առավել արդյունավետ է: Ժամանակի ընթացքում պահանջ և անհրաժեշտություն է առաջանում ձեռք բերել նոր սերնդի բալիստիկ հրթիռներ,

կործանիչներ, փոքր ու մեծ հեռահարության ՅՕՊ միջոցներ, ԱԹՍ-ներ, բարձր ճշտագրտության զենքեր, որոնք որպես կանոն, կառավարվում են, ընդունակ են նախապես տրված կամ ընտրված թիրախները բավական բարձր հավանականությամբ խոցելու:

Ստանալով հմտություններ դասաժամերի պարապմունքների ժամանակ, տիրապետելով տրված առաջադրանքներին, գաղափար ունենալով ավտոմատ և մենահատ կրակի մասին, գիտենալով նշանառման տարրերը, ունենալով փոքր տրամաչափի հրացանից /օդամղիչ/ կրակելու փորձ, ապագայում ծառայելով ՀՀ Ձինված ուժերում, սովորողները կկարողանան գործնականում հմտորեն կիրառել ստացած գիտելիքներն ու ավելի կատարելագործվել արդեն գործնականում անընդհատորեն օգտագործելով դրանք: Տեսական գիտելիքներ հետ մեկտեղ շատ կարևոր է, որպեսզի սովորողները ունենանգործնական պարապմունքների լայն հնարավորություններ, կատարելագործվել և հասնել գերազանց արդյունքների: Անհրաժեշտ է ռեալ և գործնական մարտական զենքի կիրառում ուսումնական վարժանքների ժամանակ, որպեսզի հասկանալի և ընկալելի դառնա մարտական զենքի տակտիկատեխնիկական տվյալների իսկությունն ու զենքի հետընթացի ուժգնությունը:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍ

Հիմնական դպրոցում, ունենալով կրակային պատրաստություն 5-ական ժամ անհրաժեշտ է աշակերտներին հասցնել կրակային պատրաստության խնդիրները, անվտանգության կանոնները պարապմունքների ժամանակ, ինքնաձիգի տեսակները, դրանց մարտական հատկությունները, հիմնական մասերը, ինքնաձիգի ոչ լրիվ քանդելն ու հավաքելը, ինքնաձիգի մասերի ու մեխանիզմների նշանակությունը, ավտոմատ և մենահատ հրաձգությունը, ավտոմատի մաքրումը և պահպանումը, հրազենային զենքից կրակ վարելը և նշանառության միատեսակության մարզումը, նշանառման տարրերը, նշանոցի, նշանառման կետի ընտրությունը՝ անշարժ նշանակետի վրա կրակելիս, հրաձգության կատարումը փոքր տրամաչափի (օդամղիչ) հրացանից:

Թեմաների ուսուցման նպատակն է.

- ծանոթացնել կրակային պատրաստության դերին ու տեղին մարտական պատրաստության գործընթացում,

- սովորեցնել զենքի հետ վարվելու անվտանգության կանոնները,

- ծանոթացնել զինվորի անհատական զենքի տարբեր տեսակներին,

- պատկերացումներ տալ դրանց մարտական հատկությունների մասին:

- մշակել ինքնաձիգը ոչ լրիվ քանդելու և հավաքելու սկզբնական ունակություն

- սովորողներին ծանոթացնել հրաձգության ավտոմատ և մենահատ կրակի կատարման կարգին,

- բացատրել ինքնաձիգի մաքրման և պահպանման կանոնների անվերապահորեն կատարելու անհրաժեշտությունը:

- Սովորողներին գաղափար տալ նշանառման տարրերի և կատարել ճիշտ նշանառություն մասին,

- Ձևավորել փոքր տրամաչափի հրացանից կրակ վարելու հմտություն:

Չենք, հակառակորդի կենդանի ուժի, տեխնիկայի ու կառույցների ոչնչացման սարքավորումների և միջոցների ընդհանուր անվանումը: Չենքն առաջացել է մարդկության զարգացման վաղ շրջանում՝ որպես որսի և պաշտպանության միջոց, սակայն տարբերություն չի եղել աշխատանքի գործիքների և զենքի միջև: Ժամանակակից զենքերը լինում են՝ միջուկային, քիմիական, բակտերիալոգիական, հրաձիգ (հրետանային, հրաձգային և մերձամարտի միջոցներ), ռեակտիվ, հրթիռային, ականային, տորպեդային և սառը, ֆիզիկական նոր սկզբունքների վրա հիմնված՝ ռազմավարական, օպերատիվ-մարտավարական և մարտավարական:

Սովորական զենքի (հրազեն, ռեակտիվ, հրթիռային, ռմբակոծման, տորպեդային և հրկիզող զենքեր, ճարտարագիտական ու ծովային ականներ և սառը զենք) մարտական կիրառման հետևանքով զանգվածային կորուստներ և փլուզումներ չեն լինում:

Քանի որ չկան օրինակներ և անհնար է այստեղ ցուցադրման մեթոդը կիրառելու, կարճ տեսականորեն սովորեցնում ենք միայն զենքի մյուս տեսակների մասին:

Չանգվածային ոչնչացման զենքը (միջուկային, քիմիական և կենսաբանական, ՉՈՉ) առաջացնում է զանգվածային կորուստներ և փլուզումներ՝ ընդհուպ շրջակա միջավայրի պայմանների անվերադարձ փոփոխությունները:

Գլուխ II: Կրակային պատրաստության անվտանգության կանոններ

Կրակային պատրաստությունը մարտական պատրաստության անբաժանելի ու կարևորագույն մասն է կազմում: Կրակային պատրաստության պարապմունքների ժամանակ անհրաժեշտ է խստորեն հետևել անվտանգության կանոններին, քանի որ անզգույշ շարժումը կամ փոքրիկ բացթողումները անդամալի կորուստների պատճառ կարող են հանդիսանալ: Այդ իսկ պատճառով, պետք է ոչ միայն անգիր սովորել կանոնները, այլև յուրաքանչյուր պարապմունքի ժամանակ անվերապահորեն հետևել դրանց:

Այսպես՝ կրակային պատրաստության պարապմունքից առաջ անհրաժեշտ է ղեկավարի հրամանով կամ ինքնուրույն ստուգել՝ արդյո՞ք լիցքավորված է զենքը, թե՞ ոչ:

Անվտանգության գլխավոր կանոնի համաձայն՝ կտրականապես արգելվում է զենքն ուղղել մարդկանց վրա, անկախ զենքի լիցքավորված կամ չլիցքավորված լինելու հանգամանքից:

Ձեռքի նռնակների նետման ուսուցումը նպատակ ունի սովորեցնել մարտական իրադրության տարբեր պայմաններում և հատկապես հակառակորդի հետ մոտ տարածության պայմաններում, տարբեր դիրքերից դրանց անվրեպ նետումը:

Պահպանելով դպրոցում միջառարկայական կապը ֆիզկուլտուրայի ուսուցիչների հետ՝ նռնակի նետումն իրականացնում ենք թեևսիսի գնդակի նետման միջոցով:

Յրաձգության ձևերի և կանոնների ուսուցումն անհրաժեշտ է տեղանքի, եղանակի, օրվա ու տարվա այլևայլ պայմաններում, տարբեր տարածություններից և դիրքերից, հակառակորդի միայնակ կամ խմբային նշանակետերը դիպուկ կրակով ոչնչացնելու համար:

Կրակային պատրաստության հիմնական խնդիրն է հմտությունների ձեռքբերում և կատարելագործում, սովորական զենքի արդյունավետ օգտագործման, անվրեպ կրակելու, վճռականություն կրակային պատրաստության ժամանակ ու ժամանակակից տարբեր մարտական պայմաններում: Բացի այդ մարտական տակտիկական խմբերի անձնակազմի գործողություններում գերազանց արդյունքների հասնելուն: Առաջնահերթ է զենքի նյութական մասի ուսուցումը, որի շրջանակներում ուսումնասիրվում է ոչ միայն զենքի մարտական հատկությունները, մասերն ու մեխանիզմների կառուցվածքը, դրանց նշանակությունը, այլև ցույց է տրվում զենքի խնամքի, պահպանման և մարտում դրա անխափան օգտագործման կարևորությունը: Կրակային պատրաստության անբաժանելի մաս է կազմում հրաձգության հիմունքների ու կանոնների յուրացումը, քանի որ միայն այդ դեպքում մարտի ժամանակ հնարավոր կլինի զենքը գրագետ օգտագործել: Սա մարտական պատրաստության հիմնական տարրերից մեկն է, որի նպատակն է անձնակազմին պատրաստել մշտական մարտական պայմաններում հրաձգային զենքից պաշտպանվելու և նրա հմուտ կիրառումը տարբեր մարտական պայմաններում հակառակորդին պարտության մատնելու համար:

Պարապմունքների ժամանակ ավտոմատը ոչ լրիվ քանդելու և հավաքելու ժամանակ անհրաժեշտ է ապահովել աշակերտների անվտանգ հեռավորությունը 1–2 մ:

Յրաձգության ժամանակ անհրաժեշտ է անվերապահորեն հետևել անվտանգության կանոններին և ոչ մի դեպքում չխախտել դրանք:

1. Հրաձգությունից առաջ անհրաժեշտ է հրաձգարանից հեռացնել մարդանց, կենդանիներին և փոխադրամիջոցները:

2. Ձենքը թույլատրվում է լիցքավորել միայն «ԿՐԱ՛Կ» ազդանշանից հետո՝ կրակային սահմանագծում կամ կրակի բացման սահմանագիծն անցնելիս:

3. Կրակի դադարեցման սահմանագծում անհրաժեշտ է զենքը լիցքաթափել և քաշել հրահանի մարտական ոտքը:

Արգելվում է կրակ վարել՝

- վտանգավոր ուղղություններով,
- մինչև կրակի վարման սահմանագիծ դուրս գալը,
- «ԴԱԴԱԲ» ազդանշանից կամ «Կրակը ԴԱԴԱԲԵՑՆԵ՛Լ» հրամանից հետո,
- ոչ սարքին զենքով:

Կրակն անմիջապես դադարեցվում է՝

- եթե թիրախային դաշտում հայտնվել են մարդիկ, կենդանիներ կամ փոխադրամիջոցներ,

- եթե հրամանատարական կետի վրա բարձրացված է սպիտակ դրոշ:

Հրաձգության ավարտից անմիջապես հետո հանձնում են չօգտագործված զինամթերքը և զննում զենքը:

Գլուխ III: ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԸՆԹԱՑՔ

Հայկական զինված ուժերի սպառազինությունում ամենատարածվածը՝ Կալաշնիկովի ավտոմատը (ԿԱ-74) և Կալաշնիկովի ձևափոխված ավտոմատն (ԿՁԱ) է, որոնք համարվում են զինվորի անհատական զենքը և նախատեսված են հակառակորդի կենդանի ուժի ոչնչացման համար:



Ավրոմադի հիմնական մասերն ու մեխանիզմները.

1 - փողը՝ փողաբերուփող, նշանատության հարմարանքով, զարկանածգանային մեխանիզմով և կոթով, 2 - փողաբերանի արգելակ, 3 - փողաբերուփողի կախարիչ, 4 - փակադակի շրջանակ՝ զազամխոցով, 5 - փակադակ, 6 - հեղադարձ մեխանիզմ, 7 - զազամխոցով փողի պահպանակով, 8 - փողակալ, 9 - պահեստարարուփ, 10 - սվին-դանակ, 11 - շամփուր, 12 - պիտույքների պահարարուփ:

Ինքնաձիգի տեսակները, մարտական հատկությունները, հիմնական մասերն ու մեխանիզմները

- Իրենց կառուցվածքով, հիմնական մասերով և մեխանիզմներով ԿԱ-74 և ԿՁԱ-ը միանման են. հիմնականում տարբերվում են փողի տրամաչափով, (5.45 մմ և 7.62 մմ), օգտագործվող փամփուշտների և փողաբերանի արգելակի առկայությամբ ԿԱ-74-ի վրա:
 - ԿԱ-74 և ԿՁԱ-ի մարտական հնարավորությունները ևս գրեթե միանման են:
 - Եկեք տեսնենք, թե ինչ միանման մարտական հնարավորություններ ունեն դրանք, ապա կանդրադառնանք դրանց տարբերություններին:
- Այսպիսով՝
- 1. Թե ԿԱ-74-ի, թե ԿՁԱ-ի պահեստատուփի տարողությունն էլ 30 փամփուշտ է և ավոտմատների քաշը լիցքավորված պահեստատուփով կազմում է 3.6 կգ:
 - 2. Հրաձգության նշանոցային հեռավորությունը երկուսի դեպքում 1000 մ է, մարտական արագաձգությունը՝ կրակահերթերով՝ ընդհանուր մինչև 100 կրակոց է, իսկ մենահատ կրակոցներով՝ ընդհանուր մինչև 50 կրակոց է:
 - Թեև որոշ հնարավորությունների միանմանությանը, այնուամենայնիվ առկա են նաև մարտական հնարավորությունների տարբերություններ, որոնք խիստ անհրաժեշտ է իմանալ և հիշել.
 - 1. Արդյունավետ կրակի հեռավորությունը ԿԱ-74-ի դեպքում մինչև 500 մ է, մինչդեռ ԿՁԱ-ի դեպքում այն կազմում է մինչև 400 մ:

- 2. Գնդակի թռիչքի առավելագույն հեռավորությունը ԿԱ-74-ի դեպքում 3150 մ է, իսկ ԿՁԱ-ի դեպքում՝ 3000 մ:
- 3. Գնդակի սկզբնական արագությունը՝ ԿԱ-74-ի դեպքում 900 մ/վրկ է, մինչդեռ ԿՁԱ-ի դեպքում 715 մ/վրկ է:
- 4. Գնդակի մահաբեր կարողությունը՝ ԿԱ-74-ի դեպքում 1350 մ է, իսկ ԿՁԱ-ինը՝ 1500 մ:
- 5. Սվին-դանակի քաշը ԿԱ-74-ի համար 450 գրամ է, ԿՁԱ-ի համար՝ 490 գրամ է:
- Սվին-դանակը ավտոմատիս միացվում է ձեռնամարտի ժամանակ:

Վաղ արտադրության ԱԿ-74-ը առաջին իսկական գրոհային ինքնաձիգներից մեկն էր: Նույնիսկ վեց տասնամյակ անց, ԱԿ-74 մոդելը և դրա տարբերակներ ամենաշատ օգտագործվող և ամենահայտնի գրոհային ինքնաձիգներից են աշխարհում՝ իրենց դիմացկունությանը, ցածր արտադրական ծախսերի և հեշտ օգտագործման շնորհիվ: Այն արտադրվել է շատ երկրներում և օգտագործվել է ինչպես կանոնավոր, այնպես էլ անկանոն զինված ուժերի, հեղափոխական և ահաբեկչական կազմակերպությունների կողմից: ԱԿ-74-ն, բացյ այդ, հիմք է հանդիսացել զարգացնելու բազմաթիվ այլ բնորոշ և անձնակազմի ծառայող հրազենների տեսակներ: Աշխարհում, ավելի շատ ԱԿ տեսակի ինքնաձիգներ են արտադրվել, քան մյուս բոլոր գրոհային ինքնաձիգները միասին վերցրած: Կրակելով 7,62x39մմ փամփուշտները՝ ԱԿ-74-ը պատճառում է զգալի վնասվածքներ, հատկապես, երբ գնդակը պայթում է մաշկի ներսում: Այն համեմատաբար ավելի փոքր վերքեր է առաջացնում, երբ գնդակը դուրս է գալիս մարմնից:

Ձեռքի տեսակների մասին ցուցադրվում են ուսուցողական ֆիլմեր, որտեղ ավելի տեսանելի է դրանց մասերի և մեխանիզմների դերն ու նշանակությունը:

Ավտոմատի ոչ լրիվ քանդելու կարգը

Ավտոմատի քանդման ու հավաքման համար անհրաժեշտ է առանձնացնել հատուկ սեղան, որի վրա հնարավոր կլինի մասերն ու մեխանիզմները դասավորել ըստ քանդելու հերթականությամբ:

Շատ կարևոր է գենքին խնամքով վերաբերվելը, չի կարելի մասերը դասավորել իրար վրա: Քանդելու համար կարիք չկա նաև ավելորդ ուժ կամ կտրուկ հարվածներ գործադրել:

Ինչի՞ համար է անհրաժեշտ ժամանակ առ ժամանակ քանդել ավտոմատը:

Նախ՝ գործածման ընթացքում հնարավոր է ավտոմատը կեղտոտված լինի, և անհրաժեշտ լինի մաքրել և վերանորոգել այն: Նույնիսկ եթե ավտոմատը չի գործածվել և երկար ժամանակ մնացել է անձրևի տակ կամ ձյան ու ավազի մեջ, մինևույն է, այն ենթակա է քանդման: Այս դեպքում իհարկե, ավտոմատը քանդվում է լրիվ: Ավտոմատը քանդվում է ոչ լրիվ միայն այն դեպքում, եթե կարիք կա միայն այն մաքրելու, յուղելու, ինչպես նաև մասերն ու մեխանիզմները զննելու համար:

Ավտոմատի ոչ լրիվ քանդելու կարգը

1. Անհրաժեշտ է անջատել պահեստատուփը: Ավտոմատը պահելով ձախ ձեռքում և բռնելով կոթի վզիկից կամ փողակալից՝ անհրաժեշտ է աջ ձեռքով վերցնել պահեստատուփը, բուրձ մատով սեղմել մղլակը՝ պահեստատուփի ներքևի մասը տանել առաջ և հանել:

2. Անպայման ստուգել փամփշտանոցը: Անհրաժեշտ է փոխադրիչը իջեցնել ներքև, փակաղակի շրջանակը քաշել հետ, ստուգել ու համոզվել, որ փամփշտանոցում փամփուշտ կա թե ոչ, որից հետո թողնել շրջանակի բռնակը և քաշել հրահանի մարտական ոտքը:

3. Հանել պիտուլքների պահատուփը: Անհրաժեշտ է աջ ձեռքի մատով կոթի բևի կափարիչը սեղմել այնպես, որ զսպանակի ներգործության տակ պահատուփը դուրս գա բնից:

4. Անջատել շամփուրը: Անհրաժեշտ է շամփուրի վերջնամասը փողից ձգել այնպես, որ դուրս գա նշանահատիկի հիմքի հենակից, և հանել:

5. Անջատել փողատուփի կափարիչը: Ձախ ձեռքով բռնել կոթի վզիկը, նույն ձեռքի բուրձ մատով սեղմել հետադարձ մեխանիզմի ուղղորդիչ ձողի ելուևը, աջ ձեռքով փողատուփի կափարիչը բարձրացնել և անջատել:

6. Անջատել հետադարձ մեխանիզմը: Ձախ ձեռքով բռնելով ավտոմատի կոթի վզիկից՝ աջ ձեռքով առաջ տանել հետադարձ մեխանիզմի ուղղորդիչ ձողիկը՝ մինչև փողատուփի երկայնական փորակից դուրս կգա կրնկի մասը. ուղղորդիչ ձողիկի

վերջնամասը բարձրացնել և հետադարձ մեխանիզմը հանել փակադակի շրջանակի անցքից:

7. Անջատել փակադակի շրջանակը փակադակով: Ճարուհակելով ավտոմատը պահել ձախ ձեռքով՝ անհրաժեշտ է աջով փակադակի շրջանակը մինչև վերջ տանել հետ, բարձրացնել փակադակի հետ միասին և հանել փողատուփից:


8. Փակադակը անջատել փակադակի շրջանակից: Անհրաժեշտ է փակադակի շրջանակը բռնել ձախ ձեռքով (փակադակը դեպի վեր), իսկ աջ ձեռքով փակադակը տանել հետ ու շրջել այնպես, որ փակադակի տանող ելուևը դուրս գա շրջանակի ձևավոր կտրվածքից, և առաջ տանելով՝ հանել:

9. Անջատել գազախողովակը փողի պահպանակով: Ձախ ձեռքով բռնել ավտոմատը, իսկ աջով պահատուփն ուղղանկյուն անցքով հագցնել գազախողովակի փակիչի ելուևի վրա՝ փակիչին տալով ուղղահայաց դիրք, և գազախողովակը հանել գազախցի խողովակաոստից: Հավաքել հակառակ հերթականությամբ:

ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ և ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ


Հրաձգության խնդիրներից ելնելով՝ հրամանատարները որոշում են կրակ վարելու համար անհրաժեշտ փամփուշտների տեսակներն ու քանակը:

Փամփուշտներն ըստ նշանակության լինում են մարտական, **օժանդակ և ուսումնական:** Մարտական փամփուշտները բաժանվում են ըստ հրաձգային զենքի տեսակների ատրճանակային, ավտոմատների, հրացանների, խոշոր տրամաչափի գնդացիների: Օժանդակ փամփուշտները նախատեսված են ոչ մարտական խնդիրներ լուծելու համար: **Մարտական փամփուշտը բաղկացած է՝**




1. Գնդակ, 2. Պարկուճ, 3. Պայթուցիկ նյութ, 4. Պարկուճի եզրակ 5. Հրապատիճ

Գնդակները ըստ խոցելիության լինում են՝ սովորական, գրահահար-հրկիզող, լուսածրող: Սովորական գնդակն օգտագործվում է հակառակորդի կենդանի ուժի ոչնչացման համար, գրահահար-հրկիզող գնդակն օգտագործվում է թեթև գրահաձածկույթների հետևում գտնվող/մինչև 300 մետր հեռավորության/հակառակորդի կենդանի ուժի ոչնչացման, վառվող հեղուկների հրկիզման, համար, լուսածրող գնդակն օգտագործվում է հակառակորդի կենդանի ուժի ոչնչացման, ինչպես նաև կրակի ուղղության ճշտման և նշանացուցման համար: **ճիշտ նշանառություն**



Правильное прицеливание из автомата Калашникова






Рис. 189. Отклонение пули в сторону при «игре» мышкой



Ձեռքի բեկորային նռնակները նախատեսված են հակառակորդի կենդանի ուժը նռնակի բեկորներով խոցելու ու ոչնչացնելու համար: Ըստ բեկորների ցրման հնարավորության նռնակները լինում են **պաշտպանողական** և **հարձակվողական** նռնակները արձակում են հրանոթից, նռնականետից կամ նետում են ձեռքով: Նռնակը բաղկացած է մետաղական իրանից, պայթուցիկ նյութի լիցքից և պայթուցիչից: Տարբերում են նաև հարվածային գործողության (խոչընդոտի հանդիպելիս պայթող) և դիստանցիոն (հետագծի որոշակի կետում պայթող) նռնակներ:

0,3—1,2 կգ զանգված պայթեչիս գոյացնում են մինչև 3000 բեկոր: Դրանց ոչնչացնող ազդեցության շառավիղը 5—200 մ է: Ըստ նշանակման լինում են հակահետևակային, հակատանկային և հատուկ (քիմիական, ծխասփյուռ, հրկիզող) ձեռքի նռնակներ: Հրետանային նռնակներին հաճախ անվանում են արկեր: Հրացանային նռնականետերից արձակվող նռնակները (տրամաչափը՝ 60—80 մմ, զանգվածը՝ մինչև 1 կգ) բաժանվում են բեկորայինի և գրահահարի: Ձեռքի նռնականետներից արձակվող նռնակները (տրամաչափը՝ 40—90 մմ, զանգվածը՝ 0,2— 5 կգ) բաժանվում են գրահահարի և բեկորաֆուգասայինի: Կան ուսումնական նռնակներ:

Ֆ-1— ձեռքի հակահետևակային պաշտպանողական նռնակ է: Օգտագործվում է պաշտպանողական մարտում կենդանի ուժը վերացնելու համար: Խոցում է պայթյունից առաջացած բեկորներով: Ինչպես նռնակների մեծամասնությունը Ֆ-1 նռնակը կազմված է 3 մասից՝

- Բռնկիչ: Ժամանակակից Ֆ-1 նռնակների վրա օգտագործվում են Մ3ՐԴ կամ Մ3ՐԴՄ բռնկիչները, որոնք կարող են նաև օգտագործվել ՌԴԳ-5 և ՌԴ-42 ձեռքի նռնակների վրա:
- Պայթուցիկ նյութ: /Ֆ-1 նռնակներում օգտագործվում է 60 գ տրոտիլ/:
- Մետաղյա իրան: Պատրաստվում է ձուլման ճանապարհով՝ թուջից:



Ֆ1

ՌԳԴ-5



ՌԳԴ-5



Նռնակի պաշտուսակ

Եզրակացություն

Այսպիսով, Կրակային պատրաստությունը մարտական պատրաստության ամենակարևոր առարկաներից է: Այն ընդգրկում է հիմնական դպրոցում զենքի նյութական մասի, հրաձգության հիմունքների, ձևերի և կանոնների, ավագ դպրոցում մարտի դաշտում հեռավորության որոշման, ձեռքի նռնակների նետման ուսուցման, ինչպես նաև, հրաձգության վարժությունների անցկացման ձևերով:

-Չենքի նյութական մասի ուսուցումը ընդգրկում է զենքի մարտական հատկությունները, մասերի ու մեխանիզմների կառուցվածքը և դրանց

Նշանակությունը: Կարևոր նշանակություն ունի նաև ինքնաձիգի կամ որևէ մարտական զենքի պահպանությունը, խնամքը և մի շարք այլ գործողություններ:

- հրաձգության կանոնների իմացությունն ամենակարևոր պայմաններից է մարտի դաշտում: Հրաձգության կանոնների յուրացումը պարտադիր պայման է մարտում զենքը գրագետ օգտագործելու նպատակով:

-Ձեռքի նռնակների նետման ուսուցումը նպատակ ունի սովորեցնել մարտական իրադրության տարբեր պայմաններում(հատկապես հակառակորդի մոտ տարածության դեպքում), տարբեր դիրքերից դրանց անվրեպ նետումը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- Հանրակրթական հիմնական և ավագ դպրոցների «ՆԱԽՆԱԿԱՆ ՁԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ» առարկայի չափորոշիչներ և ծրագրեր
- Նախնական զինվորական պատրաստության 8-11 դասարանների դասագրքեր
- Վիքիպեդիա
- Իրավաբան.նետ կայք

- Ռազմական հանրագիտարան
- Ռազմ.ինֆո կայք
- Վիկիվանդ.քոմ կայք